



COVID-19 -ի դեմ պատվաստանյութեր Ի՞նչ պետք է իմանան դեռահասները

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ՁԵՉ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ COVID-19-ՈՎ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՑ



- Բազմաթիվ պատանիներ, որոնք վարակվում են COVID-19-ով, ունենում են մեղմ ախտանիշներ կամ չեն ունենում ախտանիշներ: Բայց ոմանք ծանր հիվանդանում են կամ ունենում են առողջական խնդիրներ, որոնք տևում են երկար ժամանակ (կոչվում է երկարատև COVID):
- COVID-19-ի դեմ պատվաստանյութը նվազեցնում է COVID-19-ով ծանր հիվանդանալու, հիվանդանոցում հայտնվելու կամ մահանալու վտանգը: Այն նաև նվազեցնում է երկարատև COVID-ով հիվանդանալու վտանգը:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը թարմացվել են, որպեսզի պաշտպանեն վիրուսի ավելի նոր ենթատեսակներից՝ ապահովելով ձեզ համար լավագույն պաշտանություն:


ԲՈԼՈՐԸ ՊԵՏՔ Ե ՍՏԱՆԱՆ COVID-19-Ի ԴԵՄ ԹԱՐՄԱՑՎԱԾ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՄԵՎ ԴԵՂԱՉԱՓ

- **Եթե դուք արդեն վարակվել եք COVID-ով կամ եթե հղի եք կամ կերակրում եք կրծքով**, դուք այնուամենայնիվ պետք է ստանաք COVID-ի դեմ 2023-2024-ի թարմացված 1 դեղաչափ:
- **12+ տարիքի անձինք** կարող են ստանալ Pfizer-ի, Moderna-ի կամ Novavax-ի 2023-24-ի թարմացված պատվաստանյութ: 12+ անձինք, ովքեր նախկինում պատվաստվել են Covid-ի դեմ ցանկացած պատվաստանյութով և ցանկանում են ստանալ թարմացված Novavax պատվաստանյութ, պետք է ստանան թարմացված Novavax պատվաստանյութի 1 դեղաչափ: 12+ չպատվաստված անձինք, ովքեր ցանկանում են ստանալ թարմացված Novavax պատվաստանյութ, պետք է ստանան թարմացված Novavax պատվաստանյութի 2 դեղաչափ:
- Պատվաստանյութը կարող է տրվել այլ, օրինակ՝ ՄԻԱՎ-ի պատվաստանյութերի հետ **միաժամանակ**:
- Հավելյալ տեղեկությունների համար այցելեք cdc.gov/coronavirus/vaccine.



ԻՆՉՊԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

- COVID-ի դեմ պատվաստանյութերը հասանելի են բազմաթիվ բուժհաստատություններում, կլինիկաներում, դպրոցներում և դեղատներում: Ձեր մոտակայքում պատվաստման վայր գտեք այստեղ՝ <http://publichealth.lacounty.gov/vaccines>.
- Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, հարցրեք ծնողի/ խնամակալի համաձայնության մասին: Եթե գտնվում եք խնամատարության տակ (foster care), ձեր խնամատարը կամ խմբային բնակավայրի աշխատակիցը կարող է տալ համաձայնություն (consent), եթե դուք համաձայն եք:
- Չանգահարեք Հանրային Առողջության Վարչության պատվաստման զանգերի կենտրոն **1-833-540-0473** կամ **2-1-1** համարներով, եթե օգնության կարիք ունեք պատվաստանյութ գտնելու, փոխադրամիջոցի կամ տանը պատվաստվելու համար:
- COVID-ի դեմ պատվաստանյութերի համար վճարում են բժշկական բոլոր ապահովագրությունները: Չապահովագրված և թերի ապահովագրությունով անձանց համար պատվաստանյութերն անվճար են Vaccine for Children Program-ի («Պատվաստանյութեր երեխաների համար» ծրագիր) (<19 տարեկաններ) և չափահասների համար՝ Bridge Access Program-ի («Հասանելիության կամուրջ» ծրագիր) միջոցով:
- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:





COVID-19 -ի դեմ պատվաստանյութեր հ՛նչ պետք է իմանան դեռահասները

ԼՈՒՐՋ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՉՎԱԴԵՊ ԵՆ

- Տարածված կողմնակի ազդեցությունները ներառում են՝ ցավ, այտուց կամ կարմրություն ձեռքի այն հատվածում, որտեղ ներարկում է արվել, սրտխառնոց, հոգնածություն, ջերմություն, դող, գլխացավ կամ մկանային ցավ: Այս կողմնակի ազդեցությունները պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում: Ոչ բոլորի մոտ են լինում կողմնակի ազդեցություններ:
- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն:**



COVID-19-ի դեմ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՏԱՆՁ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԵՆ

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը փորձարկվել են, և պարզվել է, որ դրանք անվտանգ և արդյունավետ են դեռահասների համար: Դրանք շարունակում են գտնվել մանրակրկիտ վերահսկողության (մշտադիտարկման) տակ: Մինչ օրս **հարյուր միլիոնավոր մարդիկ** ապահով կերպով պատվաստվել են COVID-19-ի դեմ:
- Ծանր ալերգիկ հակազդեցություն (անաֆիլաքսիա) կարող է լինել ցանկացած պատվաստանյութից հետո, ներառյալ COVID-19-ի դեմ պատվաստանյութից, սակայն դա **հազվադեպ** է տեղի ունենում:
- COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո քիչ թվով մարդիկ՝ հիմնականում 12-39 տարեկան արական սեռի անձինք, ունեցել են սրտի բորբոքում (միոկարդիտ և/կամ պերիկարդիտ): Այս իրավիճակը հազվադեպ է պատահում, և դեպքերի մեծ մասն ընթանում է մեղմ և լավ է արձագանքում բուժմանն ու հանգստին: Միոկարդիտի կամ սրտի այլ հիվանդությունների վտանգը ձեզ համար շատ ավելի մեծ կլինի, եթե վարակվեք COVID-19-ով: COVID-19-ի դեմ պատվաստանյութից դուք **չեք կարող վարակվել COVID-19-ով:** Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուսը:
- Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութն ազդում է պատանիների զարգացման կամ երեխաներ ունենալու կարողության վրա:



Խոսեք ձեր բժշկի, ծնողի/ ինսամակալի կամ այլ վստահելի չափահասի հետ COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մասին: Ուղղեք նրանց ցանկացած հարց, որը դուք կարող եք ունենալ:

